

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ,

Հայ Ազգի մ Վերածնունդի մը.— Քրիստոնեայ հայաստանն և Քրիստոնեայ Տէրութիւնը.— Հայոց դէմ յարձակումներ.— Հայքի Բաժանորդները Քանի՞ Կարգի կը Բաժնուի.— Հրաժեշտ Հայրենասիրի.— Սուլթանը Բռնադատելու Որոշումը Ճշմարիտ է.— Նամակ Խմբագրութեան.— Անգլիներէն Դասեր.— Այլնայլք.

ՀԱՅ ԱԶԳԻՆ

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆԸ

Օսմանեան Պետութիւնը, ի հեճուկս բոլոր արուսետական միջոցներուն, կը քայքայի բնական լուծմամբ մը: Այդ քայքայման ամենածանր վնասը մեր ազգին եղաւ որ թօթափող աւերներուն տակ դեռ կը ճմլուի: Սակայն եթէ լաւ նայինք, պիտի տեսնենք թէ կոտորող մահմետականներն աւելի տկար ու ինկած են քան կոտորուող Հայերը: Մեր թշնամիները քան զմեզ ազէտ են, և շատ աւելի ստրկամիտ: Մեր ազգը վերածնութեան շրջան մը մտած էր երբ փոթորիկը վրայ հասաւ, և կը յուսանք թէ փոթորիկէն վերջը նորէն պի-

տի յառաջ երթայ աւելի հսկայաքայլ, մինչ թրքերը իմացական քունի մէջ կը մնան և իրենց մոլեռանդութեան նոր սաստկացումը կը ծառայէ միայն իրենց մնացած ոյժը սպառելու:

Բարոյական տեսակետէ թրքի և Հայու բաղդատութիւն մ'անել աններելի է: Թուրքը զուրկ է ճշմարիտ բարոյականի նախնական տարրերէն անգամ, եթէ բարոյականութիւն ասելով պիտի հասկանանք անձնասիրական միտումներու զգացումը յօգուտ ընկերութեան ընդհանուր շահերուն: Թուրքը թրքին անգամ չողորմիր, ո՞ր կը մնայ Հայը՝ օտարը: Խարբերող կոտորածին աստե՛ն երբ Բրդերը գործը աւարտելէ յետոյ, Թուրք մեծերուն դիմեցին աւարէն իրենց բաժինը առնլու, բան մը չկրցան ձեռք ձգել, այլ միայն սա խրատը ստացան թրքաց մեծերէն որ երթան այս անուն թրքակամ աղքատ թպղը աւարի առնուն:

Գալով Ֆիզիքական առողջութեան, յայդմ ևս Հայերը գերազանց են քան զթրքերը: Յաւ ի սիրտ կը խոստովանինք թէ Հայ ժողովուրդն ալ Ֆիզիքապէս քիչ վատթարացած չէ, մանաւանդ գաւառաց ոմանց մէջ: Եւ այժմ որ Թուրքիոյ ամեն կողմէն Հայ փախստականներ կուգան մինչև Ամերիկա, պատեհութիւն ունինք դիտելու թէ որքան սակաւաթիւ են հսկայակազմ, ջլապինդ, ուժեղ Հայեր: Պատճառ,

ունինք վախճալու թէ վերջին կոտորածները, բայց ի այն փնասէն որ ուղակի գործեցին զոհ տանելով բիւրաւոր առողջ հայորեալ, ընդհանուր վախ ու սարսափ ձգելով կնիկներուն վրայ տկարացուցին Հայու ջղերը, և նորածին սերունդը բաղդատաբար աւելի տկար պիտի լինի: Յունական ապստամբութեան ժամանակի կոտորածներէն վերջը նոյնպէս Փիզիքական անկում տեսնուած է նաև Յոյն ցեղին մէջ: Ի վերայ այս ամենայնի կան ազգու միջոցներ որոց շնորհիւ կարելի է հայ ցեղը Փիզիքապէս վերածնել, և այդ բանին ի հարկէ շատ գիտական ուշադրութիւն պիտի նուիրեն հայ առաջնորդները, ինչպէս իմացական և բարոյական առողջութեան գործին: Ճշմարիտ է սակայն թէ Թրքերը շատ աւելի տկար են քան Հայերը՝ նաև Փիզիքապէս: Փրօֆ. Յօն Տիւրինկի հետազոտութիւնները ապացուցած են թէ մահմետական դպրոցները յաճախող 100 տղոց Յօն ժառանգական սիֆիլիս ունին, և թէ հարիւր նորածիններէ միայն տասը հոգի 12 տարեկան հասակին կը հասնին: Այդ այլասեռումն է պատճառ որ նորակոչ զինուորաց թիւը որ 1885ին որոշուած էր 85,000 այսօր հազիւ 55,000ի կը հասնի և ամ քան զամ նուազելու կը միտի: Ո՛րքան աւելի Թրքեր կը մեռնին դեռ չծնած, նոյն ախտին երեսէն: Ֆռանսացի մանկաբարձ ուսուցիչ մը կը պատմէ թէ սիֆիլիսի իշխանութեան տակ կին մը 19 անգամ վիժեր է: Վստահ լինինք թէ Թրքերը այդ ախտին ձեռքէն աւելի հազարներով կը կոտորին քան Հայերը սրէն:

Այս հաշուով Թուրքիոյ հզօրագոյն տարրը դարձեալ այսուհետև հայկականը պիտի լինի: Ազգ մը կոտորածով չի ջընջուիր, այլ ներքին ապականութեամբ: Մեք բոլոր հաւատով և յուսով շարունակել պարտինք մեր ազգային վերածնութեան գործը այժմ որքան որ կարելի է, և աւելի կանոնաւոր ու ազատ եղանակով երբ Թուրքիա խաղաղի:

Քառասուն հազար որբեր կան Հայաստանի մէջ. անոնց առողջ կրթութիւն մը տալու միջոցներ պէտք է ձեռք առնուի: Ազգին մեծագոյն հոգը պիտի լինի այդ: Շնորհքով, զօրաւոր, մարմնով ու մտօք լաւ զարգացած սերունդ մը կրնայ լինիլ մեր նոր սերունդը: Բայց որբերը օտար երկիրներու մէջ ցրուելէ զգուշ լինինք:

Թող մեան հայրենի հողին վրայ, բայց դժբախտին, որքան կարելի է, օտարազգատակի խնամակալութեան ներքոյ, գոնէ ժամանակի մը համար:

Աշխատինք անխոնջ և անվատ, և պիտի կրնանք այն վերջին խօսքերը զորս նշանաւոր Գերմանացի մը յաղթահարուած և կողոպտուած Ֆռանսային համար ասեր է, կրկնել զմեր արիւնաներկ Հայաստան մասնանիչ անելով «Ապագայն հոն է տակաւին»:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Ե Ի

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Մ. Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆԻ
 ԽՕՍԵՑԵԱԼ ՆԻԻ ԵՈՐԳԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ
 ՄԵՋ

(Անգլիերէսի միջոցով թարգմանութիւնը)

Դուք շատ լաւ և կարգացած էք Թուրքիոյ վերջին ողբերգական դէպքերուն վրայ, բայց ողբերգութիւնը դեռ չէ աւարտած, և դուք, զժբաղդաբար, պիտի լսէք տակաւին, Մահմետական խաժամութիւն կանչ ու կառանջէն յետոյ որ աւերիչ փոթորիկ մը պէս անցաւ, բիւրաւոր որբոց սրտաճմլիկ լացը և անմխիթար այրիներու ողբը: Այդ չէ սակայն ամենը որ ձեր ուշադրութիւնը կը պահանջէ: Հայկական խնդիրը լոկ Հայու խնդիրը չէ այլ բովանդակ Արեւելքի — խնդիրը թէ արդեօք Օսմանեան Տէրութիւնը երբէք ընդունա՞յ է քրիստոնեայ Եւրոպիոյ անդամ մը լինելու, և եթէ չէ, ի՞նչ պարտի լինիլ Սուլթանաց յարաբերութիւնը իրենց քրիստոնեայ հպատակաց հետ աստի, և Եւրոպիոյ Տէրութեանց հետ՝ անտի: Խնդիրը հին է և շատ փշոտ: Անոր փուշերը ճիշդ այժմիկ նահատակ Հայաստանի գլխուն պսակ մը կը կազմեն: Նոյն փշերը արիւնեցին երբեմն զՅունաստան, զՍերպիա, զՌումանիա և զՊուլկարիա, այլ Եւրոպայի ձեռքը այդ քրիստոնեայ գաւառները մի զմիոյ կնի փրկած է դաժան փշերէն: Հէքն Հայաստան միայն կը մնայ ամենաշարաշար կերպով բռնուած ի փշոցն և մահու չափ կ'արիւնի, առանց ինչ և իցէ պաշտպանող ձեռքի: Անպաշտպան, ո՛հ, բոլորովին անպաշտպան է Հայաստան՝ հակառակ Եւրոպիոյ

բոլոր խոստումներուն, հակառակ այն ամէն բարձրահինչին ճառերուն որք ի նըպաստ անոր խօսուած են յ Եւրոպա և յ Ամերիկա, հակառակ այն կարեւոր իրողութեան ևս որ Հայաստան, Պեւլինեան Դաշնագրով, դրուած է ընդ պաշտպանութեամբ Մեծ Տէրութեանց առ հասարակ, և Կիպրոսեան Դաշմար, Մեծին Բրիտանիոյ հովանաւորութեան տակ ի մասնաւորի: Հակառակ, ասի, բայց աւելի ճշմարիտ կը լինէր ասել շնորհիւ եւրոպական պաշտպանութեան և համակրանաց կը կործանի Հայաստան: Այս կրնայ տարօրինակ թուիլ անոնց որք լաւ ծանօթ չեն դէպքերու ընթացքին: Բացայայտեմք այս կէտը:

Քիստոնեայ Հայաստանը դարերով կրած էր իւր Միւսիւլման տիրողաց հարստահարութիւնն ու ճախիչ տրոց ծանրութիւնը: Թրքաց բիրտ ուժին պատասխանեցին Հայք գնահատելի ծառայութիւններով իւր հողագործ և իրէն արհեստի և առևտուրի մարդիկ: Քաղաքական բարձր շրջանակաց մէջ ևս Հայք շատ կարեւոր ծառայութիւն մատուցին Պետութեանը. և նոցա ծառայութիւններն այնքան աւելի գնահատուեցան Սուլթաններէն ու նոցա նախարարներէն որքան Հայք միշտ գրաւեցին ստորակայ դիրքեր, թէեւ տաղանդով գեր ի վեր էին իրենց տիրողոսւոր գերակայից: Սուլթանաց ոմանց վստահելի քաղաքական խրատողներն Հայեր եղած են. Խոնարհութեամբ ընծայուած թանգ ծառայութեանց շնորհիւ՝ նշանաւոր Հայերը գրաւած էին Սուլթաններու համակրութիւնը և կարող էին չափով մը մեղմացնել իրենց գաւառաբնակ հայրենակիցներուն նեղութիւնները: Հայք, մեծ տէրութեանց ոչ մէկուն հետ ցեղային կամ եկեղեցական կապ ունենալով, իրենք իրենց խոհեմութեան և առ Օսմ. գահն հաւատարմութեան վստահացած էին պահպանել կարենալու համար իրենց գոյութիւնն և ազգային հաստատութիւններն, և իրօք ալ յաջս Սուլթանաց աւելի հաւատարիմ կը նկատուէին քան զՅոյներն ու այլ քրիստոնեայ հպատակներն: Այս բնական կերպով իրարու հետ յարմարացում մը, իրար հասկնալ մը տեղի ունեցած էր թուրք կառավարութեան և Հայ ազգին միջև:

(Շարունակելի)

ՀԱՅՈՑ ԴԷՄ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐ

Ամերիկայի Միացեալ Նահանգաց անթիւ Լրագիրներուն մէջ անհամար յօդուածներ, դիտողութիւններ, կարճ կամ երկար, կը հրատարակուին Հայոց և Թուրքիոյ վրայ, և ՀԱՅՔի խմբագիրը ամսական տուրք մը վճարելով յատուկ ընկերութեան մը, ամեն օր ծրար մը կընդունի այդ տեսակ Լրագրական յօդուածներու, այս երկրի թերթերէն յատկապէս կտրուած: Այս յօդուածներու մէջ կան Հայոց նպաստաւոր և ուղիղ տեսութիւններ, ընկերութեանց և ժողովոց արարքներու վրայ տեղեկութիւններ, Հայոց գըլխուն եկած դէպքեր ևն. — և կան նաև անճիշդ դիտողութիւններ, Հայու և Հրէի միջև թիւր բաղդատութիւններ, կոտորածոց պատճառներուն վերաբերութեամբ սխալ կարծիքներ, Հայ ցեղին դէմ անիրաւ յարձակումներ:

Այդ անպաստ գրութիւնք մեր դատին փնաս շատ կը գործեն: Միայն նիւեորք Հէրալտը իւր չարաչար գործունէութեամբը հանգանակութեանց գումարներուն ահագին անբաւականութեանը հօր պատճառ մը եղաւ: Ամերիկայէն միլիոն մը տոլար կը հաւաքուէր եթէ Հէրալտի նման մոլորեցուցիչներ չլինէին հանրային կարծեաց:

ՀԱՅՔի Անգլիերէն բաժնին պաշտօններէն մին է ուղղակի և անուղղակի պատասխանել այդ յարձակմանց, ջրել սխալ փաստերը, ցուցնել ճշմարտութիւնը: Մեր հայրենակիցներէն ոմանք կը տրտնջան եղեր թէ ՀԱՅՔի հայերէն մասն քցացեր է, և ոմանք ալ անգլիերէնը չեն կրնար կարդալ: Ինչ ասել է այդ, բարեկամներ, միթէ ՀԱՅՔի արժէքը մեծապէս աւելցած չէ՞, ոչ ձեր անհատական այլ ազգային տեսակետով: Եւ ուրեմն ինչո՞ւ կը վարանիք այս հրատարակութեան ոյժ տալ:

Գաղթական Հայոց Մարդահամարը պատրաստողին հարկ է անունները մի առ մի գրել, որպէս զի ամբողջ թիւը զբտնուի առանց սխալման, և նշանակուի թէ քանին այր է, քանին կին, քանին ազջիկ, քանին տղայ: Բայց կրնայ ոք խմբագրութեանս ուղարկել միայն ամբողջները, առանց անուններու երկար ցուցակի:

ՀԱՅԲԵՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԸ

ՔԱՆԵՎԱՍՐԳԻ ԿԸ ԲԱԺԱՆՈՒԻՆ

Ամենայն բաժանորդները անոնք են որք նոր տարիին սկսել են քանի մը շաբաթ առաջ իրենց բաժանորդագրութիւնը կը նորոգեն, այնպէս որ նոր տարիի առաջին թիւը հրատարակուած ատեն նորոգէն առնոց անունը նոր տոմարին մէջ անցած կը լինի։ Այսպիսիները գործի մարդ են, և բաժանորդագրութիւնն նորոգելն ալ գործի տեղ դնելու շափ կրթութիւնը լինելով՝ առաջ իւր ճիշդ ժամանակին կը կատարեն։

Միջին կարգիներն անոնք են որ նոր տարիին առաջին թիւը, թերեւս նաև երկրորդը, կ'ուզեն տեսնել։ «աճապարելու քան մը չկայ։ Խմբագիրը իրենց վրայ վրստահ կրնայ ըլլալ և թերթին յղումը շարունակել»։ Այսպիսիները կը վճարեն նոր փարեշրջանին առաջին և երկրորդ ամսոց ընթացքին մէջ։ Բայց և այնպէս փաստ կ'անեն ՀԱՅԲԻՆ ուրիշ կերպով մը, որ իրենց մտքէն չանցնիր։ և ահա թէ ինչպէս։ Խմբագիրը մարդարէ չլինելով չի կրնար գուշակել թէ ո՞րոնք են այն բաժանորդները որք պիտի վճարեն նոր տարւոյն առաջին շաբաթներուն մէջ և ո՞րոնք միտք քունին վճարելու։ Կամ պէտք է հին ցանկին համեմատ շարունակէ յղել ամենուն ալ, և կամ բոլորին ալ դադարեցնել։ Վերջին կերպովը կը փաստէ ոմանց զգացումներուն, որք վը կարծեն թէ իրենց վրստահութիւնն չունի։ Իսկ առաջին կերպովը շատ մը կորուստ կ'ունենայ։ Ուստի բնագոյնի է որ ամեն բաժանորդ անմիջապէս նորոգէ նոր տարիին։

Երրորդ կարգիներն անոնք են որք աւելի կ'ախորժին բնաւ չվճարել, բայց եթէ վճարելու դիւրին միջոց մը, ինքնեկ առիթ մը լինի, կամ մասնաւոր հաւաքչի մը դէմը գտնուին, կէս յօժարութեամբ մը կը վճարեն։ «Չէ, չեմ վճարեր» ասել ամօթ կը համարին։ ազգային զգացումը զօրաւոր չէ բայց պատուոյ զգացում ունին։ Եթէ քաղաքէն հեռանան, նոր հասցէ չեն հաղորդեր Խմբագրութեան, և թերթը ժամանակ մը կ'երթայ հին հասցէին ու կը կորսուի, կամ թէ ուրիշ մը ձրի կը կարգայ զայն։

Չորրորդ կարգին կը վերաբերին չբա-

ժանորդները։ այսինքն անոնք որք թերթը կարդալու հետաքրքիր են, և բաժանորդագրին վճարելու կարողութիւն ալ ունին, բայց կծծի, փոքր մարդ չի են, և ասոր անոր օրինակը փոխ առնուլ կարդալը իրենց աւելի դիւր կուգայ։ Անոնք բազմաթիւ են, և թերթի նիւթական դժուարութիւններուն գլխաւոր պատճառը այսպիսիներն են։ Երբեմն կը պատահի որ լեզուանի մէկը ասոնց մէջ յարկուպէս կը շրջի և զիրենք ամէնցնելով բաժանորդ գրութիւն կուտայ։ և ահա կը տեսնես որ այսինչ տեղը որ 3—4 բաժանորդ ունէի 30—40 հաստի ելեր է։ Տալորդ տարին եթէ նոյն անձը կամ անոր պէս մէկը չգտնուի հոն որ նոյն ներութիւնը յանձն առնաւ և տեսակ մը բռնութեամբ անհոգ կամ քգաչ Հայերուն բաժանորդ գրութիւն տայ, այն քաղաքին բաժանորդաց թիւը նսրէն կ'իջնէ։

Ուրեմն հրաւէր կ'ուղղենք մեր լեզուանի և ազգեցիկ հայրենակիցներուն ամեն տեղ որ մէկ շաբաթ աշխատին յատուկ այցելութեամբ կամ ուրիշ մասնաւոր ջանքով ՀԱՅԲԻՆ բաժանորդ շատցնել։ Եթէ հաճին զայդ անել, ութ աւուր մէջ 500 նոր բաժանորդ կը գտնուի, և ՀԱՅԲԻՆ որ հիմա անցեալ տարուան կրկնապատիւ կը ծախք ունի, առանց դժուարութեան կը յառաջանայ։

Կը փափաքինք որ այս յօդուածը կարդացողները բոլորն ալ բարձրանան առաջին կարգին։

Տիար Բ. Ռ. Գ., ուսանող Փօլիտիկ. Ա. կադեմիային մէջ ի վերմոնթ, կը գրէ—

«ՀԱՅԲԵՐ, անգլիերէն ՀԱՅԲԵՐ ըսել կ'ուզեմ, բարձր տեղ մը կը գրուէ հիմա մեր ընթերցարանին (reading room) մէջ ընթերցողք շատ կը համակրին առ Հայ ազգը և հայ կինը»։

ԳՈՐԾ ԳՏՆԵԼՈՒ ՃԱՐԸ

Այն Հայերը որք կը փափաքին ՀԱՅԲԻՆ անգլիերէն բաժնին մէջ դնել իրենց ծանուցումը, կրնան յղել ամսուն 1էն և 15էն մինչև չորս օր առաջ։ Ամեն մէկ ծանուցումին համար պէտք է կանխիկ յղել 25 սէնթ, պայմանաւ որ երեք անգլիերէն աւելի չլինի։ Պէտք է դնել ծանուցումը մէջ թէ ինչ արհեստ կամ գործ գիտէ կամ կ'ուզէ անել։ Այսպիսի ծանուցումներ կրնան մեզի յղուիլ ամեն նահանգէ։

Հ Ր Ա Փ Ե Շ Տ

ՀԱՅԹԵՆԱՍՏԱՐԲԻՆ

(Հրատեղի վերջին վայրկեանս մէջ գրուած)

Աւ չէ կարելի պէտք է որ երթամ:
Թէ բաժինս ըլլայ շատ դառն, մահ անգամ.
Պէտք է որ երթամ լուր տար աշխարհաց
Թէ ինչեր կ'ընեն մեր խեղճ հայրենեաց:

Պէտք է որ երթամ վառնալուց մէջէն,
Միթէ իմ հոգիս թանձր է այլոցմէն:
Որք կ'աղակոչ, լախաբով, բիրով և սակրով
Մեռան չարաչար լացով ու կոծով:

Պէտք է որ պատմեմ այն անլուր կերպեր,
Որով կատարեց խուժան իւր դերը.
Թէ ինչպէս մարտեց որդին հօրն կուրծքին,
Մինչ մայրն խեղացնոր կը ճշէր ուժգին:

Թուրք Բիւրդ խուժանին «Աստուած» կոչելով
Ջարդ եւն անինայ կարի հապճեպով.
Տեսնուած բան չէր դարերէ ի վեր,
Բոլոր նմանեացն վրայ կը ձգէր ստուեր:

Այլ ոչ այն «Զըլզըթ» թուրք կնոջ ջատուկ
Միայն դժոխքի հոգւոյ էր յատուկ
Որով գրգռէին այրերն ի նախնիր
Եւ կատարելու աննման ոճիր:

Այս ամենն պէտք է որ երթամ պատմեմ
Դռնէ դուռ շրջիմ, լամ ու արտասուեմ
Օտարներն գութի և Հայն վրէժի,
Գրգռեմ յուսահատն, ընդդէմ թուրք լիժի:

Պէտք է որ ըսեմ թէ ջարդի պահուն
Կեանքի և ինչքի, պատույ ինչ անհուն
Աւարներ եղան ոճիրք դործուեցան.
Որոնց տեղ չկ'ար բնաւ յաւիտեան:

Պէտք է որ ըսեմ մեր պանդուխտ Հայոց
Նաեւ համակիր օտար ազգայնաց
Թէ լոկ ինքնակամ խաչակրութիւն
Միակ լոյս մնաց հոգեվարք Հայուն:

Պէտք է որ ըսեմ, ջարդենք, ջարդուինք
Կամ մեռնինք յաւիտ և կամ ազատինք,
Ի հեճուկս անոնց որք կ'ան անխուով
Եւ Հայուն վշտն չցուցին գորով:

Եւրոպեան ազգաց խորդախ դիւաններ,
Նկատումներով անշահ, վատչուէր
Թող ժամեր վատեն հային անգորով
Իսկ մենք յուսահատ մարտ բանաք շուտով:

Ահա կեանքի չէնք շինուած ճիգերով
Քայքայի այսպէս ճարճասիւններով:

Բայց վերջը կեանքին ըլլայ մահ թանգամ
Խիղճս կ'ստիպէ, պէտք է որ երթամ:

Աւ չէ կարելի պէտք է որ երթամ,
Վերէն ու ներքէն ունիւմ այս հրաման.
Պէտք է որ կեանքիս ու գիրքիս հանգիստ
Մնաք բարով ըմբռնեմ մեկնիմ անվիրտ:

Վրէժ գոչենք ուժգին, բայց ոչ լոկ խօսքով
Մեր կեանքով, ինչքով ոտք ելնենք փութով,
Կամ աղատութիւն կամ մահ կանչուըռտենք
Նշանաբանի ըլլանք գերիկ մենք:

ՂԱԶԱՐ ԷՖ. ՏԻՐԱՏՈՒՐԵԱՆ

Ղազար ԷՖ. Հայկաբան դասատու, 1895,
Դեկտ. 14-ի գիշերը չորս ուսանող և մի ուրիշ
ընկերով փախաւ Այնթապէն ծովեզր երթալու:
Միւս օրը (կիրակի) Գիւլիսէն 3—4
ժամ դէպ ի հիւսիս Աֆրոն գետակին մօտ
անտառներու մէջ՝ ժամերով խեղճ բազմութեան
դէմ պատերազմելէ յետոյ՝ ըստ պանդուխտ
մեծ շարժարանքով՝ Այս խումբէն ընթացաւ արտ ոմն գետ ողջ է և
... բանս է: Մովսէս Յոսէփեան (Սինեբր)
փախաւ և անհնարին արկածներէն անցնելով
Լանտոն ինկաւ: Յարութիւն կրէլիւզեան,
Արրահամ Փանոսեան (Սինեբր) եւ
պատուական տղայք), Հաճի Փոնոս (խոհարար)
և Ղազար ԷՖ. կողոպտուեցան, շարժարանեցան,
ջարդուեցան: Ոտանաւորք գրուած է
մեկնելու վերջին րոպէին:

* * *

ՍՈՒԼԹԱՆԸ ԲՈՆԱՆԴԱՏԵԼՈՒ

ՈՐԱՇՈՒՄԸ ՃՇՄԱՐԻՑ Է

Հետեւեալ կարեւոր հեռագիրն Պէտլինէն
եկաւ Յունուար 31 թուականով:—
Պէտլինի լրագիրներն, խօսելով Ռուսիոյ
Արտաքին Գործոց նորընտիր նախարար
Կոմս Մուրավիէվի այցելութեան վրայ
ի Գերմանական մայրաքաղաքն, կը
հակադրեն իրեն ներկայութեան մասին
ցուցուած անսարգեթութիւնը այն հետաքրքրութեան
զոր գոյց տուին անցեալ օր Կոմս
Կոլուխօսքի այցելութեան: Կոմս Կոլուխօսքի
այցը թէպէտ կարճատեւ եղաւ, սակայն
և այնպէս կարեւոր փոփոխութիւն
արտադրեց գերմանական քաղաքականութեան
մէջ հանդէպ Սուլթանին և հաւանականօրէն
նաեւ նկատմամբ պալքանեան տէրութեանց:
Աւստրիական կառավարութիւնը երկար
ատենէ ի վեր

կը պնդէ թէ Երրեակ նիզակակցութեան, և մասնաւորապէս երկեակին, նպատակը կրնայ իրագործուիլ միայն շնորհիւ միաբան քաղաքականութեան մը ի Կ. Պոլիս: Աւստրիական նախարարն կը հաւատայ թէ Գերմանիոյ յարումը ռուսական քաղաքականութեան, այսինքն բարեկարգութեան ծրագիրներու առանց բռնադատութեան, մինչ միւս կողմանէ Աւստրիա և Իտալիա կը կողմնակցին Անգլիոյ պնդելու համար թէ ի հարկին պէտք է բռնութեան դիմել, կը վտանգէ երրեակ նիզակակցութեան տեւականութիւնը:

Այնպէս հասկցուած է թէ Կոմս Կօլուսօսքի Կայսեր և իշխան Հօհենլոօհէի արած է սա ամենակարեւոր յայտարարութիւնը թէ Աւստրիա և Իտալիա պիտի միանան Անգլիոյ ի բռնադատել ուժով զՍուլթանն ի բարենորոգում, եթէ մինչև անգամ հարկ լինէր գործել առանց ծառասայի և Ռուսիոյ գործակցութեանը:

Կայսրը այլ ևս կարծի հակառակող մը չէ բուռն միջոցներու, այլ համաձայնած է ընկերակցիլ ոյժ գործածելու եթէ միւս տէրութիւններն միաձայն գտնուին:

Կէս պաշտօնական գաղափար մը տրուած է Կ. Պոլսէն ի մասին բարենորոգմանց ծրագրին, որուն նայելով գաւառները, եւրոպական թէ ասիական, պիտի ունենան տեսակ մի ընտրական խորհուրդներ, վարչական կառավարութեամբ: Պետական խորհուրդ մը, գաւառական ներկայացուցիչներէ և Սուլթանէն կարգուած անդամներէ բաղկացած, նիստ պիտի անէ ի Կ. Պոլիս տարեկան որոշ շրջանի մը միջոցին: Խորհուրդը ձայն պիտի ունենայ նախարարաց ընդունութեան մէջ և ելեմտի կանոնաւորման մասին: Սուլթանը իւր նախարարաց ձեռքով պիտի կառավարէ և ոչ թէ ի ձեռն պալատական պաշտօնէից, և գաւառական վարչութիւնն ևս պիտի բարեկարգուի:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մասնաւոր գործերիս պատճառով տոնաւորուած եմ առ ժամանակ միակ լօնդօն: Նկատելով որ Եւրոպայի հայ գաղթականութեան շրջանում կարիք է զգացուում Րաֆֆիի երկասիրութեանց, մեծ քանակութեամբ բերել եմ տուել: Սրանցից սպառուած են «Սամուէլը», «Դաւիթ-Բէ-

կը», «Կայծերի» Բ. հատորը և այլն. սրանց համար սաստիկ պահանջ կայ հայ ընթերցող հասարակութեան մէջ: «Սամուէլի» հրատարակութեան իրաւունքը Ռուսաստանում վաղուց ստացուել է և չուտով կը լրանայ թոյլտրութեան ժամանակամիջոցը:

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ են և այլ գրուածքներու ձեռագիրներ. որոնցից նշանաւոր է «Սալբի» անունով եռահատոր ստուար վէպը, որը պարսկահայոց «Կայծերն» է. պատկերացնում է նրա անցեալը, ներկան և ապագան: Թէև հանգուցեալ հեղինակի ջերմ փափաքն էր տպագրուած տեսնել իւր բազմաթիւ ճգանց արգասիքը, բայց նրան չվիճակուեցաւ այդ, «անկախ պատճառներով»:

Այդ բոլորի հրատարակման հոգսը ծանրանում է ինձ վրայ: Որոնց տպագրման միակ աղբիւրն է Րաֆֆիի մնացեալ աշխատութիւններից գոյացած արդիւնքը, որը նուազեց, վերջին տարիներս տեղի ունեցած ցաւալի դէպքերի պատճառով:

Հանգուցեալի յիշատակը յարգողները, նրա գրուածքները լիակատար հրատարակուած տեսնել ցանկացողները, նըպաստած կը լինին դոցա լոյս ընծայուելուն, տարածելով իրենց շրջանու վաճառելի գրքերը:

Մեծ Խմբագիր, խնդրեմ բարեհաճեցէ՛ք սոյն գրութիւնս զետեղել ՀԱՅԲԻ էջերում:

Ընդունեցէ՛ք խորին յարգանացս հաւաստիքը,
ԱՅՐԻ ԱՆՆԱ ՐԱՖԻ

ՄԵԶ ՄՕՏ ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ

ՐԱՖԻԻ ՀԵՏԵԻԵՍԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Խենթ և Զալալեդդին» մի գրքի մէջ ամփոփուած. գինն է 6 շիլին:

«Խաչագողի Յիշատակարանը» չորս մասերը մի գրքի մէջ ամփոփ. 5½ շ.

«Կայծեր» Հ. Ա. 4½ շ.

«Խամսայի Մեղիքութիւնները» 4½ շ.

«Վէպիկներ և Պատկերներ» Հ. Ա. 4½ շ.

» » Հ. Բ. 4½ շ.

«Զահրումար» Վէպ. 4½ շ.

«Հայ Կինը և Հայ Երիտասարդութիւնը» (սակաւաթիւ) 3 շ.

«Կայէնի Կտակը» 3½ շ.

«Մինն Այսպէս ու Միւսն Այնպէս» պատկերազարդ վէպ. 2 շ.

«Արծիւ Վասպուրականի» (սակաւ.) 2 շ.

«Տաճկահայք» 1 շ.

Հանապարհածախսը մեր վրայ:

Mrs. Anna Raffi, Այրի Աննա Րաֆֆի
5 Richmond Gardens,
Uxbridge Road, London W. ENG.

ԾԱՆ.—Այս գրքերը գնել փափաքողները պէտք է ղիմնն վերոյիշեալ Քասեղին, ոչ թէ ՀԱՅԲԻ խմբագրութեան, ԽՄԲ.

ԵՆԳԼԻՏԵՐԷՍԻ ԴԵՍԵՐ

ՆՈՐ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԴԱՍ. Դ

Բայց որո խոնարհումը դիւրին է անգլիերէնին մէջ, բայց կան քանի մը կարեւոր գիտելիք անգլիերէն բայի հայերէնէն տարբեր եղանակաւ որովմբուն վրայ:

Հայերէն կ'աւելի, կ'երթամ, կ'երթառն. ատոր դէմ անգլիերէն չորս տեսակ առաւածք կան—I go, I do go, I am going, I shall go. Ո՞ր ձեւը ո՞ր պարագայի մէջ պէտք է գործածել:

I go, կ'երթամ, պարզ ձեւն է, բայց I do go, կը գործածուի երբ պէտք է ընդգծել իմաստաւոր իմացնել թէ կ'երթամ, այդ մասին յարուցուած կասկած կամ առարկութիւն մը փարատելու համար, կամ տարակոյտով եղած հարցումի պատասխանելով: Օրինակի համար եթէ ասն քեզի — you do not go to school. Դուն դպրոց չես երթար: պատասխան կուտայ I do go, կ'երթամ (դուն կը սխալիս ինծի ասելով թէ դպրոց չեմ երթար):

I am going կը նշանակէ թէ ճիշդ հիմա երթալու գործողութեան մէջ եմ: Պոյնտիք կ'ասեն այս պարագայի տակ (դպրոց) կ'երթամ կոր, տաճկերէնին կիտիյորըմ ձեւին հետեւելով. բայց հայերէնով ճիշդ անգլիերէնին միտքը տալու համար կ'աւելիք, ի չնալ եմ:

I shall go կը նշանակէ կ'երթամ ապաւնի մտք. ես ալ կ'երթամ (պիտի երթամ) դպրոց այս իրիկու և եղբայրդ հոն կը տեսնեմ:

Անգլիերէն բայերուն գործածութեան մէջ կայ ուրիշ մասնաւոր բան մը հայերէնէն տարբեր: Հայերէն կ'աւելիք.

Գնացի՞ր:

—Գնացի, չգնացի, կը պատասխանենք:

Բայց անգլիերէնի մէջ գնալ բայը պարզ պատասխանին մէջ չի կրկնուիր, այլ միայն do օժանդակ բայով կ'ասուի, I did, I did not.

Պիտի երթա՞մ. Will you go?

—Պիտի երթամ I shall, առանց ցօի, որպէս թէ հայերէնը լինէր սապէս—

Պիտի երթա՞մ.

—Պիտի:

Do you write? կը գրե՞ս:

—I do (առանց writeի), իրեւ թէ հայերէն պատասխանէինք լոկ —կը: Այսպէս կը կամ կիով պատասխանել կայ հայ գաւառականի մէջ, և շատ պատուական ձեւ է, գրաւոր լեզուին մէջ մտցուելու արժանի:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

Կ. Պոլիս, Փետր. 4—Տէրութեանց դեսպանը Արեւելեան խնդրոյն վրայ իրենց խորհրդածութիւնը եզրակացուցեր են և իրենց յանձնարարութիւններն պիտի ներկայացնեն իրենց կառավարութեանց:

Կ. Պոլիս, Փետր. 9—Հոս երիտասարդ Թրքաց կողմէն ցոյցի մը երկիւղ կը գգացուի: Պորսայի գները շարունակ կ'իյնան:

Դեսպանները յայտարարութեան մը օրինակները ստացած են երիտասարդ Թրքաց կողմէն՝ ծանուցանող թէ որոշած են ուժի դիմել: Փողոցներուն մէջ ալ ներկայ կառավարութեան դէմ յայտարարութիւններ ցրուեալ գտնուել են:

Ռուսական դեսպանը գրեր է Դրան թէ հարկ է խափանել յարոյթը «որ կրնայ Թուրքիոյ ամբողջութիւնը վտանգել»: Այս ազդարարութիւնը դիւանագիտական շրջանակաց մէջ բաւական տպաւորութիւն գործեր է, նկատելով մանաւանդ յՍտեմա կատարուող նաւային պատրաստութիւնները:

Աթէնք, Փետր. 9—Արքայական որոշում մը կը հրամայէ որ Յունաստանի բոլոր մարտանաւերը կրետէ յղուին:

Լոնտոն, Փետր. 9—Հոս և ցամաքին վրայ պաշտօնականաց կարծիքն այն է թէ բովանդակ եւրոպիոյ խաղաղութեանը համար սպառնալից է Թուրքիոյ և Յունաստանի միջև յարաբերութեանց ձգտումը: Նաեւ կը ծանուցուի այսօր թէ Թրքական մարտանաւեր և զօրք մեկներ են Կ. Պոլսէն դէպ ի կրետէ, և թէ ի հեճուկս իւր նախարարաց և դեսպաններուն խրատուց՝ Սուլթանը կ'ուզէ բուռն կերպով ճնշել յարոյթը:

Տէյլի Նիւզը կ'իմանայ թէ Կ. Պոլսոյ փողոցները չորեքշաբթիկ աւելի պահապան զօրքեր կը պահպանեն և երկուրդի Պալատը զօրաց շղթայով մը շրջապատուած է: Պատերուն վրայ փակցուած յայտարարութիւնները Սուլթանին հրահանգովը եղած կը կարծուին որուն դիտումն է խռովութիւն յարուցանելով դեսպանաց խորհրդակցութիւնը ընդհատել:

Յունական նաւատորմը պիտի ջանայ արգելել թուրք զօրաց մուտքն ի Կրետէ :

Ռուսիա արգելիւր է Միւսլիմաններուն ռուսական հողէ անցնելով ուխտագնացութիւնն ի Մէքքէ՝ պիւպօնական վարակումի վախով :

Անթիմոս, Յունաց Կաթողոց Պատրիարքն հրաժարեր է :

Վիէնայի մէջ կը ծանուցուի թէ Աւստրիոյ կայսրը, Ֆրանց Ճօզէֆ, ընկերակցութեամբ Արտաքին Գործոց Նախարար Կոյուստօքիի, պիտի այցելէ Փետրպուրկ Ապրիլ 27ին :

Տիար Ն. կը գրէ մեզ Բալիֆորնիոյ Ֆրէզնոյէն. — Արդարեւ, բարեկամ, այժմ առաւել ևս պէտք է քաջալերել ու աջակցիլ ձեզ, աւելի ընդարձակ ծաւալում տալու ՀԱՅՔին :

Պատ. Ճ. Ուուտ, ամերիկացի երէցն, կը գրէ. — «Մինչև հիմա այնպէս կը զգայի թէ ամեն ինչ որ կրնայի նուիրել թշուառացեալ Հայոց, պէտք է ի թուրքիա յղէ. բայց ՀԱՅՔին հրատարակութիւնը պահպանելու համար ձեր ջանքերուն խորապէս համակրելով և փափաքելով ստանալ անոր մէջ պատուանակուած տեղեկութիւնները, կը յղեմ ձեզի իմ բաժնեգրին և անունս : . . . » (անգլիերէ՛նէն թարգմանուած) :

Երանի՛ թէ ձեր հայրենակիցներն ալ այս Ամերիկացիին չափ գոնէ զգային ՀԱՅՔի կարեւորութիւնը . . . :

Չինուորական ծառայութիւն անելու տարիքը ունեցող Ամերիկացւոց թիւը, ըստ վերջնագոյն հաշուոյ, 10 միլիոն է : Նիւ Եորք նահանգը միայնակ կարող է տալ 800,000 հոգիէ բաղկացած բանակ մը, իսկ Բէնսիլվէնիա՝ 839,000 :

Հնչակեան Յեղափոխական Կուսակցութեան Ռուսչուքի Մասնաճիւղը տպեալ չըջարեւրական մ'է հաներ, որով կը հարուածէ նաղարպէիեան խմբէն հերձուածող Հնչակեան խմբակը : Չկրցանք հասկնալ թէ Ռուսչուքի Մասնաճիւղը ինչո՞ւ ինքն իրեն տուած է այս նեղութիւն քանի որ իւր կեդրոնական բերանը, Հնչակ, բաւական երկարօրէն կը խօսի հերձուածեալներուն դէմ :

ՀԱՅՔ

ՀԱՆՏԻՍ ԿԻՍԵՄՍԵՅ

ԱՆԳԼԻԵՐԷՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ

Տարեկան բաժնեգրին է կանխիկ երկու տոլար (տասն ֆրանք)

Հասցէն է

M. S. GABRIEL, M. D.

341 West 23rd St., New York.

Թղթադրամ պարունակող նամակները պէտք է ապահովագրել :

Օտար երկիրներէ դրամ կրնայ յղուիլ Գաւտի Լիօնէի փոխանակագրով, կամ Մընի Օրտըրով (Money Order), կամ Փռանսական Դէմպոլ Փասթով :

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը վիսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան : Այսպէսով մեզ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

HISTORY OF THE ARMENIANS IN INDIA

From the earliest times to the present day,

by MESROB J. SETH

Armenian Examiner to the University
of Calcutta

190 էջ, լաթակազմ : Գինն է 5 ֆր. 50 սթմ. կանխիկ վճարելի :

Դիմել հեղինակին հետեւեալ հասցէիւ. 11, Wellesley Square, E. Calcutta, India

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7րդ էվինիու

Նիւ Լորք

26րդ և 27րդ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետեւեալ գներով :

Ա. տարի,	1 տոլար	50 սենթ	կամ	7.5 ֆր.
Բ. "	2 "		կամ	10 ֆրանք :
Գ. "	2 "		" "	"
Դ. "	2 "		" "	"
Ե. "	2 "		" "	"

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի Ս Ս Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն